***917. Ս. ՀԱԿՈԲԻ մկրտության ավազանի մոտ, կամար խոյակի վրա.***

Ես Ովանէս, Գրիգոր կամարս շեբի Գուդկան, դվիմ իմ մեր (մօր) Ոսոսմի հոգին համար:

*Հրատ. Բարխուդարեանց, 273։*

## 98. ՄԻՐՁԻԿ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

*Գյուղամիջի ս. Գաբրիել եկեղեցուց բացի արձանագրություններ ունի գյուղից հարավ մի լեռնահովտի մեջ գտնվող Քյարխանա վանքը, որ թաղակապ փոքր եկեղեցի է՝ շինված մի կամարի վրա, սրբատաշ քարերով։ Գյուղի շրջակայքում եղած Ովասափ և Աստվածածին մատուռները հասարակ շենքեր են. վերջինիս մոտ հիշատակված են երեք խաչքար։*

***918. Ս. ԳԱԲՐԻԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի ճակատին.***

Արդեամբ Միգիկայ սուրբ Գաբրիէլ եկեղեցիս շինեցաւ 1674 ամի:

*Հրատ. Բարխուդարեանց, 276։ 276։ Լալաեան, V, 317։*

***919. Ս. ԳԱԲՐԻԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի մոտ ագուցված խաչքարի վրա.***

Կանգնեցի Սարուխանս սուրբ խաչս բարեխաւս Ոսկի հոգուն. թվ. :ՌՀԶ: (1627):

*Հրատ. Բարխուդարեանց, 276։*

***920. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ընմի ճակատին ագուցված մի խաչքարի վրա.***

թվ. :ՌԿԴ: (1615)

*Հրատ. Բարխուդարեանց, 276։ Լալաեան, V, 345 (Թվականը՝ :ՌԿԵ:)*

***921. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ԳԱՎԹՈՒՄ, տապանաքարի վրա.***

Հանգիստ հողապատեան տեառն Եղիազարու, յաւէտ հանգիստ է նշխար սորին, որ աստ կան. հոգին զոլով միջնորդ առ տէր ժտական վասն իւր որդեկացս, որ եմէ տատանման փորձանաց զաղտնի, որ օգտել փութան զմիաբանութիւն հոգևորական, փրկել ի փորձանաց այժմ և յապագայն. հանգեաւ սուրբ հայրն մեր թուին Հայկազնոյ :ՌՃԿԲ: (1713):

*Հրատ. Բարխուդարեանց, 277։*

***922. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ԳԱՎԹՈՒՄ, տապանաքարի վրա.***

Այս է հանգիստ Զաւենու անապատի Մկրտիչ վարդապետին. թվ. :ՌՂԵ: (1646):

*Հրատ. Բարխուդարեանց, 277։*

***923. ՔՅԱՐԽԱՆԱ ՎԱՆՔԻ ԳԱՎԹՈՒՄ, տապանաքարի վրա.***

Այս է տապան տանս սպասաւոր Մահտեսի վերաձայնի, Նաւասարդ աղա անուանի, եղբայր Թամրազ Քալանթարու Ջակամ մեծ Սահակ ի Ղարամուրաս գեղջէ, կոչի Արամի. մահն դիպէ վաթսուն և :Բ: (2) ամի. :ՌՃՂ: (1741) թուի և շամդրեա մարմին է :ՂԳ: (93) ամի:

Ծանոթ. *Վերջին Նախադասությունն անհասկանալի է։*

*Հրատ. Բարխուդարեանց, 277։*